Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

13.08.2025թ.

ՀՀ ԿԳՄՍ <<Գավառի արվեստի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժական աշխատողների հետևյալ թափուր տեղերի համար՝

Մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսներ՝

1.<<Գեղանկարչություն>> մասնագիտության մոդուլներ <<Գծանակարչության հիմունքներ>> /72 ժամ/, <<Գծանակարչության 1-ին մակարդակ>>/72 ժամ/, <<Ծեփակերտում>> /36 ժամ/, <<Ռեալիստական գունանկար>> / 176 ժամ/, <<Գունանկարչության հիմունքներ>> /72 ժամ/, <<Գունանկարչության 1-ին մակարդակ >> / 72 ժամ/:

<<Գործիքային կատարողական արվեստ>> և <<Երգեցողություն>> մասնագիտության մոդուլներ <<Հայ ժողովրդական ստեղծագործություն>> /72 ժամ/, <<Հայ երաժշտական գրականություն>> / 72 ժամ/:

Հանրակրթական առարկա՝

ֆիզկուլտուրա/ 254 ժամ/:

Վերոնշյալ թափուր տեղերի Մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

1)Հանրակրթական առարկաների դեպքում՝ <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենիք 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

2)մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը պետք է ներկայացնի ներքոհիշյալ փաստաթղթերը՝

1)դիմում ձև/լրացվում է տեղում/,

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճեն),

3)անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճեն),

4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5)ինքնակենսագրություն,

6)մեկ լուսանկար 3x4 չափի,

7)այլ պետության քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստելու փաստաթուղթ, բացառության՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8)արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն),

9)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: Մասնակիցը Հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային(մոդուլին) և մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմսը, որը բաղկացած է հինգ հարցից, որում կարող են ներառվել նաև 1-3 գործնական հարցեր և կարող է անձին տրվել մինչև հինգ հարակից հարց, որը նույնպես առնչվում է առաջադրանքին:

Փաստաթղթերը ընդունվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Գավառ, Բունիաթյան 25 հասցեում,
2025 թվականի օգոստոցի 13-ից մինչև օգոստոսի 26 -ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի օրերից :
Մրցույթը տեղի կունենա
2025թ. օգոստոսի 29 -ին ժամը 14:00-ին
ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Գավառ, Բունիաթյան 25
Տեղեկության համար զանգահարել /0264/ 2-66-66 հեռախոսահամարով
Էլ. հասցե՝ erajshtakancollege@mail.ru